№ 210 Նոյեմբերի 26 (Դեկտեմբերի 8) 1880 Նոյեմբերի 26 (Դեկտեմբերի 8) № 210

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թուին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Տասն և եօթ հազար րուբլ։ Նամակ Շամախուց։ Նամակ Գանձակից։ Նամակ Գօրուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Русскій Курьеръ» լրագրի թղթակցութիւնը. Անգլիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹ ՀԱԶԱՐ ՐՈՒԲԼԻ

„Արարատ" ամսագրի հոկտեմբերի տետրակում դարձեալ կարդում ենք մի յօդուած ալաշկերտցոց 17,000 րուբլու մասին։ Թէ ո՞վ է գրել այդ յօդուածը, կամ ի՞նչ անուն է թաղնված նրա ստորագրութեան տակ, մեզ համար մի և նոյն է, բաւական է, որ նա տպվել է Էջմիածնի պաշտօնական ամսագրի մէջ և մենք կը համարենք նրան Մայր Աթոռի խօսքը։

„Արարատը" պատասխանելով „Մշակի" 151 համարում տպված մեր յօդուածին, „բարեկամաբար" խորհուրդ է տալիս մեզ ուսումնասիրել հայոց անցեալ և ներկայ պատմութիւնը, ծանօթանալ Էջմիածնի և նրա գահակալ Հայրապետի իրաւունքների հետ, և այնուհետեւ միւսանգամ չը ձանձրացնել Էջմիածնին, ասելով, թէ ի՞նչ իրաւունքով է պահում նա իր մօտ ալաշկերտցի սովատանջների 17,000 րուբլին, կամ ի՞նչու այդ գումարը չէ գործադրում նուիրատուների բաղձանքի համեմատ։

Ցաւում ենք, որ զանազան տեսակ հանգամանքներից ստիպված, մենք հարկադրըված ենք այժմ փոքր ինչ լռել, թէ ի՞նչ պատմական նշանակութիւն ունի Էջմիածինը հայոց ազգի վերաբերութեամբ, կամ մինչեւ ո՞ր սահմանն են հասնում նրա գահակալ Հայրապետի իրաւունքները։ Բայց մի և նոյն ժամանակ չենք կարող համաձայնվել „Արարատի" պաշտօնական ազգաբարութեան հետ, թէ Էջմիածնի գահակալ Հայրապետը հայոց ազգի „Տէրն" է, հայոց ազգի „Իշխանն" է, և ինչպէս որ կը կամենայ, այնպէս իրաւունք ունի վարվելու հասարակութեան գումարների հետ։

Հայոց պատմութեան ո՞ր քունջուպուճախից է հանել „Արարատը" այդ ինքնակալ „Տէրն" ու „Իշխանը",—մեզ յայտնի չէ։ Մենք այսքանը միայն գիտենք, որ հայոց ազգը երբէք չէ ունեցել հոգեւոր բռնապետներ և այժմ նոյնպէս չը պիտի ունենայ։

Եթէ հայոց եկեղեցին ունի մի գլխաւոր արժանաւորութիւն, որ իրաւունք է տալիս նրան կոչվել ազգային ժողովրդական եկեղեցի,—այդ այն է, որ ժողովուրդը ինքն է ներկայացնում եկեղեցին և ինքն է կառավարում նրան։ Հայոց եկեղեցու հոգեւոր ներկայացուցիչները, լինի նա կաթողիկոս, լինի նա պատրիարք, լինի նա մի վիճակի առաջնորդ, կամ մի ծուխի քահանայ,—բոլորը ժողովրդի ընտրեալներն են։ Եւ եթէ նրանք հակառակ են գնացել ժողովրդի շահերին, բռնաբարել են նրա ազգային, աւանդական իրաւունքները, այդպիսի դէպքերում, ժողովուրդը հրաժարեցրել է նրանց իրանց աթոռից և դրել է նրանց տեղը աւելի լաւերին։

Մեր պատմութիւնը այդ է ցոյց տալիս մեզ։ Մեր պատմութեան մէջ չենք տեսնում, որ հայոց եկեղեցին ունենար հռոմի անսխալական պապեր, Մէքքայի բռնակալ խալիֆաներ, Երուսաղէմի աստուածընտիր քահանայապետներ, կամ Տիբէթի աստուածացեալ դալայ—լամաներ։ Եւ եթէ գտնվել են այսպիսիները, հայոց եկեղեցին նրանց միշտ դասել է Շմուէլների, Բրքիշօների և Սուրմակների հետ։

Բայց մեր պատմութեան ամբողջ ընթացքում երբէք չենք գտնի մի ժամանակ, որ մեր բարձր հոգեւոր իշխանութիւնը այն աստիճան ձգտած լինէր միապետական սկզբունքներին, որպէս այժմ։ Ճշմարիտ է, երբեմն եղել են հոգեւոր բռնապետներ, բայց նրանք աւելի արտակարգ, բացառական անձնաւորութիւններ էին, քան թէ մի որոշ պրինցիպի, քան թէ մի ամբողջ կառավարչական սիստեմայի ներկայացուցիչներ։

Ի՞նչ ենք տեսնում այժմ։—Էջմիածինը հարիւր հազարներ է առնում ժողովրդից և ժողովրդին հաշիւ չէ տալիս։ Էջմիածինը ինչպէս կամենում է, այնպէս է վարվում եկեղեցական հարիւր հազարներ արդիւնք բերող կալուածների հետ։ Էջմիածինը մեր վանքերի միաբանութիւնները ոչնչացնում է և վանքերը կապալով է տալիս այս և այն վարդապետին։ Էջմիածինը մեր վիճակների եպիսկոպոսական առաջնորդութիւնները խափանում է և նրանց տեղը վարդապետ յաջորդներ է նշանակում, որ կարողանայ աւելի ներգործել։ Էջմիածինը ժողովրդի ընտրած քահանային ժողովրդից խլում է, և նրան թողնում է առանց քահանայի։ Էջմիածինը իր ամբողջ կառավարութեան ղեկը տալիս է մի որ և իցէ բախտախնդիր Մոնկունու ձեռքը։ Էջմիածինը Ալաշկերտի գաղթականների անունով 17,000 րուբլի *) փող է հաւաքում և փողերը տարիներով պահում է իր մօտ։ Երկար կը լինէր մի ըստ միոջէ յիշել, թէ ինչ է անում Էջմիածինը, մենք հէնց այդ 17,000 րուբլու վրա կը կանգնենք։

Ժողովուրդը չէ ցանկանում, որ այդ գումարը Էջմիածնում մնայ։ Գուցէ Էջմիածինը „Մշակի" խօսքը ժողովրդի ձայն չէ համարում։ Այդ իր կամքն է։ Բայց ի՞նչ կասէ Էջմիածինը ալաշկերտցոց հարիւրաւոր ստորագրութեամբ հանրագրին, որ մինչեւ այսօր պահվում է մեր խմբագրատան մէջ։ Ի՞նչ կասէ, որ երկու տարի առաջ Կ. Պօլսի «Դպրոցասիրաց-Արեւելեան» ընկերութեան ներկայացուցիչներից մէկը անձամբ դիմեց Էջմիածին և պահանջեց նոյն գումարը։ Ի՞նչ կասէ, որ մի երկու ամիս առաջ Կ. Պօլսի „Միացեալ ընկերութիւնների" և սովելոց յանձնաժողովի նշանաւոր ներկայացուցիչներից մէկը դարձեալ անձամբ դիմեց Էջմիածին և պահանջեց նոյն գումարը։ Վերջապէս ի՞նչ կասէ Էջմիածինը, որ այսօր Կ. Պօլսի ազգային ժողովի մէջ հարց է բարձրացել՝ պահանջել Էջմիածնից ոչ միայն ալաշկերտցոց 17,000 րուբլին, այլ Էջմիածնի գահակալ Հայրապետի տասն և չորս ամեայ գործունէութեան հաշիւը։ Այդ բոլորը ժողովրդի ձայներ չե՞ն։

Իսկ գալով „Արարատի" այն խօսքերին, թէ Վեհ. Հայրապետի տնօրէնութեամբ ալաշկերտցոց 17,000 րուբլով արժէթղթեր են գնված, և նրանց տոկոսով դպրոցներ են բացված Ալաշկերտի մէջ,—մենք հազիւ թէ կարող ենք հաւատալ այդ խօսքերին, քանի որ մեզ յայտնի է, որ ոչ Էջմիածինը և ոչ էլ Վեհ. Հայրապետը ռուսաց սահմանից դուրս, Թիւրքաց հողի վրա դպրոցներ բաց անելու իրաւունք չունեն։ Եւ դրա ապացոյցն այն է, որ ինքը Վեհ. Հայրապետը մի երկու ամիս առաջ կամեցել էր յանձնել Կ. Պօլսի „Միացեալ ընկերութիւնների" ներկայացուցիչներից մէկին, որ իրանց անունով Ալաշկերտի կողմերում երեք դպրոցներ բաց անեն և կըստանան Էջմիածնից իւրաքանչիւր տարի 80 ոսկի նրանց պահպանութեան համար։ Նա պատասխանել էր թէ 80 ոսկով երեք դըպրոցներ կառավարել անկարելի է։

Ուրեմն, Ալաշկերտի կողմերում դպրոցներ դեռ գոյութիւն չունեն։ Իսկ եթէ „Արարատ" ամսագիրը Ուչ-Քիլիսէի վանքի վաղեմի տիրացուանոցը Էջմիածնի հիմնած դպրոց է համարում,—մենք դրան կը կոչենք յանդուգն աչքակապութիւն։

Ց. Մ.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Նոյեմբերի 15

Երբ սկսենք «Մեղու» լրագրի միջոցով հայ-բողոքականների վրա բարդած բոլոր զրպարտութիւնների դէմ բողոքել և փաստերով նրանց ջրել, կարծեմ բաւական չէր, թէ որ մի ամբողջ լրագիր պարապէր այդ հարցով միայն։ Ամեն մի հակառակորդ, որ ոտնակոխ է արած խղճի արդար օրէնքները, կամենալով խոր վշտացնել իր եղբօր սիրտը, դիմում է զարհուրելի միջոցների։ Նա, չը խնայելով լսողների ականջին, հրապարակաւ զրպարտում է իր արիւնակից եղբայրը մի այնպիսի զզուելի արատով, որ ոչ թէ միայն փոքր ի շատէ խիղճ ունեցող քրիստոնեայ, այլ բարեխիղճ մահմեդականը անգամ ըստ իր կրօնքի չի համաձայնվի իր բերանը առնել, ուր մնաց լրագրութեան մէջ շատերին հաղորդել։ «Մեղու» լրագրի 81 համարում կարդում ենք, որ ութ բընիկ պօլսեցիներ «Մեղուի» պ. խմբագրին իրանց ուղղած նամակի մէջ վկայում են, իբր թէ մի պօլսեցի Վրդանէս անուն լուսաւորչական քահանայ Պօրտ ընկերութեան փայլուն մետալներէն հրապուրվելով, դրժում է քահանայական ուխտը, Նիկոմիդայէն Կ. Պօլիս է գալիս և սկսում այնտեղ լուսաւորչականների մէջ իր քարոզչութիւնները հետեւեալ կերպով։ «Ձեր ընդունած սուրբերն խելառ մարդիկ էին և ձեր պաշտած Աստուածածինը լկտի կնիկ մի էր, և այլն և այլն, նրա ինչը կը յարգէք։» Երբ մի բողոքական քարոզիչ, որին յանձնված է բողոքական հայերի մեծամասնութիւնից այլ կերպ չը մտածող մի ժողովուրդ, այդ գաղափարն ունի Տիրամօր մասին, հետեւապէս միւս բողոքական հայերն էլ պիտի ունենան նոյն գաղափարը։ Զարհուրելի զրպարտութիւն։ Եթէ Վրդանէսն Մահմեդի ղուրանը քարոզում լինէր, նա ևս չը պիտի յանդգնէր անպատուել Տիրամօր մի այդպիսի վատ մականունով, քանզի Մահմէտն Քրիստոսին մարգարէ է ընդունում, ուրեմն և տալիս է նրա մօրը մարգարէի մօր պատիւ, ուր մնաց երբ Վրդանէսն քարոզել է Քրիստոսի սուրբ աւետարանը, որի մէջ նա միշտ կարդացել է Տիրամօր վերաբերեալ հետեւեալն։ «Դու կանանց մէջ օրհնված պիտի լինիս և բոլոր ազգերն երանի պիտի տան քեզ։» Երբ որ բանն Աստուած տեսնելով սուրբ կոյս Մարիամի խոնարհութիւնը, հեզութիւնը և սըրբութիւնը, բարեհաճեց նրա արգանդն իջանելու և մարմին առնելու, ապա ինչպէս կարելի է ասել, որ արարածը համարձակվի անպատուել այն անձը, որին Արարիչը տուել է մի այդպիսի գերագոյն պատիւ։ Ճշմարիտ է բողոքականները չեն պաշտում սրբերին, ծունր չեն դնում նրանց գերեզմանների, մասունքների և պատկերների առաջն, այդ պատիւը տալիս են նրանք Աստուծուն միայն, իսկ սրբերը Աստուած չեն, այլ մարդիկ են, բայց մի և նոյն ժամանակ սրբերին արժան պատիւն ևս չեն զլանում նոցանից։ Նոքա ճանաչում են սրբերին Աստուծոյ սիրելիներ, որոնց խօսքերը, եթէ համաձայն էին սուրբ Գրքի վարդապետութեանը, ընդունում են, ինչպէս Աս-

---

*) Ամեն անգամ մենք ալաշկերտցոց գումարը 17,000 րուբլի նշանակելիս, «Արարատ» ամսագիրը մի առանձին խնամքով ուղղում է մեր սխալը և 16,358 րուբլի է նշանակում։ Երեւի, Էջմիածնի արժէթղթերը տոկոս չեն բերում, չը նայելով որ, այդ գումարը քանի տարի է, որ տոկոսով է տուած.